

Բլագոդարնոյե

Մակերես՝ 1177 հա կմ²

Բնակչություն՝ 277

Տնային տնտեսությունների թիվը՝ 62:

Գյուղ Տաշիրի տարածաշրջանում, Սևաբերդ գետակի ձախ ափին, Տաշիր քաղաքից 10 կմ հարավ-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 62 կմ հեռավորության վրա: Գյուղը հիմնադրվել է 1907-1908 թվականներին Կիրիլ ազգանունով մոլդկանի կողմից և այն անվանվել է Կիրիլովկա:

Չետագայում գյուղը անվանել են Բլագոդարնոյե: Բարձրությունը ծովի մակարդակից 1600 մետր:

Կլիման բարեխառն է, ձմեռը երկարատև ու ցրտաշունչ, ամառը զով: Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 1027 հա, որից՝ 147,7 հա վարելահող, 491,3 հա խոտհարք, 349,7 հա արոտ: Գյուղի մասնագիտացման հիմնական ուղղությունը անասնապահությունն է: Չբաղվում են նաև մեղվաբուծությամբ:

Ունի հիմնական դպրոց, բուժկետ, կապի հանգույց:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են գազաֆիկացումը, խմելու ջրագծերի ներքին ցանցի վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքների իրացումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

: